ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА

ГНКО "ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
ХОРЕОГРАФИЧЕСКИЙ КОЛЛЕДЖ"

REPUBLIC OF ARMENIA MINISTRY OF EDUCATION, SIENCE, CULTURE AND SPORT
"YEREVAN DANCING ART STATE COLLEGE" NCSO

Երևան, 375009, Բայրոնի փող. 5
Հեռ./ֆաքս` (374 10) 56-44-26

5 Byron St., Yerevan, 375009
Tel.:/ fax: (374 10) 56-44-26

Ереван, 375009, ул. Байрона, 5
Тел./факс: (374 10) 56-44-26

№ 1/5-31-22
25.05.2022թ

*˝Ղահրաման˝ ՍՊԸ տնօրեն*
*պարոն Մ. Հասանյանին*

*Հարգելի պարոն Հասանյան*

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ˝Երևանի պարարվեստի պետական քոլեջ˝ ՊՈԱԿ-ի և ˝Ղահրաման˝ ՍՊԸ-ի միջև 23.12.2021թ. կնքված թիվ ԵՊՊՔ-ԳՀԱՊՁԲ-22/1 պայմանագրի համաձայն /այսուհետ Պայմանագիր/ Ձեր ընկերությունը մինչև սույն թվականի մայիսի 21-ը պետք է մատակարարեր պանիր ˝Լոռի˝ 6 կգ: 23.05.2022թ. Ձեր ընկերությանը գրավոր զգուշացվել է, որ մեկ օրվա ընթացքում կատարեն վերը նշված ապրանքի մատակարարումը, որը առ 25.05.2022թ. չի կատարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի պահանջը` ˝Երևանի պարարվեստի պետական քոլեջ˝ ՊՈԱԿ-ը չմատակարարված ապրանքի մասով միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ ˝Ղահրաման˝ ՍՊԸ-ն ծանուցումը ստանալուց հետո 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում ˝Երևանի պարարվեստի պետական քոլեջ˝ ՊՈԱԿ-ի 900018001314 հաշվեհամարին պարտավոր է փոխանցել 29.1 /քսանինն ամբողջ մեկ տասնորդական/ ՀՀ դրամ տույժ` Պայմանագրի 6.2 կետի համաձայն, 291 /երկու հարյուր իննսունմեկ/ ՀՀ դրամ տուգանք` Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրեր` հավելված 4.2 և հավելված 5.1/, համաձայն որակավորման ապահովման 1.4 կետի և պայմանագրի ապահովման 1.4 կետի, կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվի ˝Հայբիզնեսբանկ˝ ՓԲԸ` ˝Երևանի պարարվեստի պետական քոլեջ˝ ՊՈԱԿ-ի 900018001314 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

˝Ղահրաման˝ ՍՊԸ-ին՝ ˝Գնումների մասին˝ ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

*Տնօրենի Ժ/Պ* *Ս. Ղազարյան*